ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Աշոտ Մելքոնյան (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Ашот Мелконян (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Ashot Melkonyan (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Էդիկ Մինասյան - ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ 6

Эдик Минасян - АРМЯНО-ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ В ГОДЫ НЕЗАВИСИМОСТИ РА ... 26

Edik Minasyan - ARMENIAN-TURKISH RELATIONS DURING THE YEARS OF INDEPENDENCE OF THE RA 28

Էդուարդ Զոհրաբյան - ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1930-1980-ԱԿԱՆ ԹԹ. 31

Эдуард Зограбян - ПРОЦЕСС ИДЕОЛОГИЧЕСКОЙ ТРАНСФОРМАЦИИ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА В СОВЕТСКОЙ АРМЕНИИ С 1930 ПО 1980-ЫЕ ГОДЫ 39

Eduard Zohrabyan - THE PROCESS OF IDEOLOGICAL TNANSFORMATION OF SOCIIETY IN Soviet Armenia in 1930-1980 39

Ֆելիքս Մովսիսյան - ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻՏՔԸ 1840-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԼԱՆԴԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ 40

Феликс Мовсисян - АРМЯНСКАЯ ОБЩЕСТВЕННАЯ МЫСЛЬ ОБ ИРЛАНДСКОМ НАЦИОНАЛЬНОМ ДВИЖЕНИИ 1840-Х ГОДОВ 57

Feliks Movsisyan - ARMENIAN PUBLIC OPINION ON THE IRISH NATIONAL MOVEMENT OF THE 1840s 57

Валерий Тунян - ПОБОРНИКИ ОТРИЦАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН 59

Վալերի Թունյան - ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՁԱՏԱԳՈՎՆԵՐԸ 64

Valery Tunyan - DEFENDERS OF THE DENIAL OF THE ARMENIAN GENOCIDE 64

Վանիկ Վիրաբյան - ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱՆՏԱՆՏԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ 1917 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԻՑ ՀԵՏՈ 65

Ваник Вирабян - МЕЖЭТНИЧЕСКИЕ СОБЫТИЯ И АНТАНТОВСКИЕ ГОСУДАРСТВА В ЗАКАВКАЗЬЕ ПОСЛЕ ОКТЯБРЬСКОЙ РЕВОЛЮЦИИ 1917 ГОДА 82

Vanik Virabyan - INTERETHNIC DEVELOPMENTS AND THE ENTENTE STATES IN TRANSCAUCASIA AFTER THE OCTOBER 1917 REVOLUTION 82

Սարգիս Գրիգորյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ԻՍԼԱՄԱԿԱՆՆԵՐԻ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ 84

Саргис Григорян - АКТИВНОСТЬ АЗЕРБАЙДЖАНСКИХ ИСЛАМИСТОВ НА КАВКАЗЕ И БЛИЖНЕМ ВОСТОКЕ 91

Sargis Grigoryan – ACTIVITY OF AZERBAIJANI ISLAMISTS IN THE CAUCASUS AND IN THE MIDDLE EAST 92

Նառա Սարգսյան - ՀԱՄԻԴՅԱՆ ՁԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ 93

Нара Саргсян – ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ” 101

Nara Sargsyan – THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING" 101

Էդգար Չախոյան - Վրաստան-ԱՄՆ դիվանագիտական հարաբերությունները Միխեիլ Սաակաշվիլիի նախագահության առաջին շրջանում (2004-2007 թթ.) 102

Эдгар Чахоян – ДИПЛОМАТИЧЕСКИЕ ОТНОШЕНИЯ ГРУЗИИ И США ПРИ ПЕРВОМ ПРЕЗИДЕНТСКОМ СРОКЕ МИХАИЛА СААКАШВИЛИ (2004-2007 гг.) 112

Edgar Chakhoyan - DIPLOMATIC RELATIONS BETWEEN GEORGIA AND THE USA DURING THE FIRST PERIOD OF THE PRESIDENCY OF MIKHAIL SAAKASHVILI (2004-2007) 113

Арман Сафарян – О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ КОНВЕРГЕНТНОЙ И МУЛЬТИМЕДИЙНОЙ ЖУРНАЛИСТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 114

Արման Սաֆարյան – ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՎԵՐԳԵՆՏ և ՄՈՒԼՏԻՄԵԴԻԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ 118

Safaryan Arman – ON SOME FEATURES OF CONVERGENT AND MULTIMEDIA JOURNALISM IN THE REPUBLIC OF ARMENIA 118

Անդրանիկ Եսայան – ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XVIII Դարի ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 119

Андраник Есаян – СИТУАЦИЯ В СЕВЕРО-ВОСТОЧНОЙ АРМЕНИИ В ПЕРВОЙ ЧЕТВЕРТИ 18 ВЕКА 125

Andranik Yesayan – THE SITUATION IN NORTHEASTERN ARMENIA IN THE FIRST QUARTER OF THE 18-TH CENTURY 126

Տարոն Սաքոյան - ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐՆ ՈՒ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ (2010-2016) ... 127

Тарон Сакоян - ИНТЕРЕСЫ И ПРОТИВОРЕЧИЯ ТУРЦИИ И РОССИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ В НОВЫХ ГЕОПОЛИТИЧЕСКИХ РЕАЛИЯХ (2010-2016) 136

Taron Sakoyan - INTERESTS AND CONTRADICTIONS BETWEEN TURKEY AND RUSSIA IN THE SOUTH CAUCASUS IN NEW GEOPOLITICAL REALITIES (2010-2016) 136

Majid Karimi - THE ETIMOLOGY AND ORIGINS OF THE NAME NAKHICHEVAN FROM THE HISTORICAL SOURCES 137

Մաջիդ Քարիմի - ՆԱԽԻՋԵՎԱՆ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ և ԾԱԳՈՒՄԸ ԸՍՏ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ 147

Маджид Карими - ЭТИМОЛОГИЯ И ПРОИСХОЖДЕНИЕ НАЗВАНИЯ НАХИДЖЕВАН ПО ИСТОРИЧЕСКИМ ИСТОЧНИКАМ 147

Օֆելյա Դարբինյան - ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 148

Офелия Дарбинян - ОСОБЕННОСТИ РЕПАРТАЦИИ ЛИВИНСКИХ АРМЯН, РЕЗУЛЬТАТЫ И ПОСЛЕДСТВИЯ (1946-1949 ГГ.) 158

Ofelya Darbinyan - PECULIARITIES, RESULTS AND CONSEQUENCES OF THE REPATRIATION OF THE LEBANESE-ARMENIANS (1946-1949) 158

Արևշատ Մինասյան - ՈՒՐՈՒԳՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ 159

Аревшат Минасян - АРМЯНСКАЯ ОБЩИНА УРУГВАЯ 164

Arevshat Minasyan - THE ARMENIAN COMMUNITY OF URUGUAY 164

Միքայել Միքայելյան - ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԱՏԹԵՈՍ II ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՌՈՒՍԱՑ ԿԱՅՍՐ ՆԻԿՈԼԱՅ II-Ի ՀԵՏ 166

Микаел Микаелян - ВСТРЕЧА КАТОЛИКОСА ВСЕХ АРМЯН МАТТЕОСА II ИЗМИРЛЯНА С РОССИЙСКИМ ИМПЕРАТОРОМ НИКОЛАЕМ II 172

Mikayel Mikayelyan - MEETING OF CATHOLICOS OF ALL ARMENIANS MATTEOS II IZMIRLYAN WITH RUSSIAN EMPEROR NICHOLAS II 172

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Սամվել Մկրտչյան - ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ 173

Самвел Мкртчян – ПРОЯВЛЕНИЕ ЭТНИЧЕСКОЙ ИДЕНТИЧНОСТИ И ИСТОРИЧЕСКОЙ ПАМЯТИ В АРМЯНСКОЙ ПРАЗДНИЧНООБРЯДНОЙ КУЛЬТУРЕ 178

Samvel Mkrtchyan - MANIFESTATIONS OF ETHNIC IDENTITY AND HISTORICAL MEMORY IN THE ARMENIAN FESTIVAL AND RITUAL CULTURE 178

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Մերի Հովհաննիսյան - ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 180

Мери Оганнисян - *ОСОБЕННОСТИ ПРОЕКТНОГО ОБУЧЕНИЯ* 186

Meri Hovhannisyan - PECULIARITIES OF PROJECT-BASED LEARNING 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ԳԻՏԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ԱՆՎԱՆԻ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ .. 188
ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՊԱՏՄԱԲԱՆԻ ՕՐՎԱՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀՆԳՕՐՅԱ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ 190
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ 192

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

НА ПЕРЕКРЕСТКЕ ИСТОРИЧЕСКИХ И ЕСТЕСТВЕННЫХ НАУК 194

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 196
INFORMATION ABOUT THE AUTHORS 197

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 198

Նառա Սարգսյան

ՀԱՄԻԴՅԱՆ ՋԱՐԴԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ «ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՑ» ՎԻՊԱԿՈՒՄ

Հիմնաբառեր. քաղաքական իրադարձություններ, եվրոպական ու թուրքական նենգ դիվանագիտություն, 1894-1896 թթ. եղեռն, հոգեբանական անցումներ, ազգային հրատապ խնդիրներ, ազգային գաղափարախոսություն, ինքնապաշտպանություն, ազատություն, ընդվզում, դարձի ճանապարհ:

Հոդվածում քննվել են 1894-1896 թթ. համիդյան ջարդերի, դրա քաղաքական դրդապատճառների հոգեբանական ազդեցությունների արտացոլումը Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակում: Նկատվել է, որ 1894-1896 թթ. առաջին ցեղասպանությամբ պայմանավորված, հոգեկերտվածքային փոփոխություններ կրած գրական հերոսի նոր տեսակի խնդիրը քննված չի եղել: Այդ հերոսի երկու՝ իրար լրացնող ու իրարամերժ տեսակների ստեղծման առաջին ու հաջողված փորձը՝ հանձինս տեր Հուսիկի և Հայրապետ էֆենդու, կատարել է Ա. Արփիարյանը «Կարմիր ժամուց» վիպակում:

Դժվար է գերագնահատել Արփիար Արփիարյանի[1] դերն ու նշանակությունը 19-րդ դարավերջի արևմտահայ, նույնիսկ ամբողջ հայ գրականության զարթոնքի գործում: Նա գրական դաշտ մտավ այնպիսի դժվարին մի ժամանակաշրջանում, երբ ազգային կյանքում տեղի էին ունենում սոցիալ-քաղաքական բուռն իրադարձություններ:

Հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական անմխիթար վիճակն Արփիարյանին ստիպում է դիմելու գործնական քայլերի, փնտրելու ելքեր, լուսավոր ուղիներ՝ դուրս բերելու հային աշխարհում տեղի ունեցող փոփոխություններով պարտադրված փակուղուց, որը հրատապ էր, անհրաժեշտ. «Բացարձակ մթոյ և անստուգութեան մեջ ենք, և այս յայտնի եղելութիւն է ահա, որ տխուր երեւոյթ կուտայ ազգային գործոց այժմեան կացութեան»[2], – գրում է Ա. Արփիարյանը:

Նա ամենից առաջ փրկությունը փնտրում է հոգևոր վերակազմության, հոգու և մտքի լուսավորության, բարոյականության, ուժի, ներքին կյանքի կազմակերպման մեջ. «Ժողովուրդը **պարտաճանաչ ընել,** ահաւասիկ ինչ որ պետք է ըլլայ մեր կէտ նպատակին»[3] (այս և հետագա ընդգծումներն մերն են– Ն. Ս.):

Նա, թվում է, դառնում է Ռաֆֆու իրական «խենթը», մի յուրօրինակ ռոմանտիկ հերոս, որը ոգեշնչվում է նոր գաղափարներով, և որոնք խորացնում, զարգացնում և տեսականորեն հիմնավորում է «Մշակ», «Արևելք» թերթերին աշխատակցելու տարիներին:

Հատկանշական է, որ Արփիարյանը բեկումնային է դարձնում մամուլի դերը գրականության նորովի իմաստավորման համար: Նա իրականության վերափոխումը կապում է գրականության, նրա հասարակական դերի կարևորության և ներգործության հետ[4]: Գրականությունը դիտվում է իբրև օգտակար միջոց՝ ժողովրդի գաղափարական դաստիարակության, հոգևոր և մտավոր առաջադիմության գործում[5]: Այլ կերպ ասած՝ Արփիարյանը

* Հոդվածը ներկայացվել է 30.09.2021 թ., գրախոսվել՝ 20.12.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.12.2021 թ.:

[1] Ա. Արփիարյանի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս Ստեփանյան Գ., Արփիար Արփիարյան, Ե., 1955: Տե՛ս նաև Շահպազ Ստ., Արփիար Արփիարեան, հ. 2, Պէյրութ, 1987, Մուրադյան Լ., Արփիար Արփիարյան. կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1991:

[2] Տե՛ս «Արևելք», Կ. Պոլիս, 1884, թիւ 166, յուլիս 21:

[3] Տե՛ս «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, թիւ 309, նոյեմբեր 21:

[4] Ա. Արփիարյանը նոր սերնդի հետ միասին չի անտեսում նախորդների ստեղծած գրական ժառանգությունը, կուտակած փորձը: Ընդհակառակը, նրանք յուրացնում են հոգևոր փորձը, դրա հիման վրա ստեղծում նորը, ձգտում են նվաճել նոր եզերքներ՝ փորձելով իրենց տենդոտ մտքով ու որոնումներով բացել գեղարվեստի զարկերակը: Մյուս կողմից՝ տեղի են ունենում ներհյուսումներ հին ու նոր ուղղությունների միջև: Ճիշտ է, ռեալիզմը արտացոլում է տիրող դարաշրջանի ընդհանուր ոգին, հոգեբանությունը, սակայն, ինչպես գրում է Ս. Սարինյանը, «գրական նախորդ ուղղությունը՝ ռոմանտիզմը, այնուամենայնիվ, շարունակում էր գոյատևել, փորձելով հաստատել իր ոճի կենսունակությունը»: Տե՛ս Սարինյան Ս., Մուրացան, Ե., 1976, էջ 23:

[5] Պատահական չէր Ռաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի տպագրությունը «Արևելք» օրաթերթի էջերում:

կարևորում է գրականության «ազգափրկիչ» դերը: Այդ պատճառով «Արևելք», «Մասիս» և «Հայրենիք» պարբերականներում խիստ առաջնային ու անհրաժեշտ է դառնում գրականությունը կյանքին մերձեցնելը, ուստի, ըստ Արփիարյանի, անհրաժեշտ է վերափոխել նրա զարգացման ընթացքը, խորացնել բովանդակությունը, հոգեբանությունը, մշակել նոր ուղղություն, գեղարվեստական նոր թեմաներ (ժողովրդի ինքնագիտակցությունը բարձրացնելու, ընդվզումը կազմակերպելու, հերոսության մղելու և այլն) ու ձևեր[1]: Սակայն 1894-1896 թթ. ջարդերը այլ կերպ տնօրինեցին զարգացման ճշմարիտ հունի մեջ մտած արևմտահայ գրականության բախտը: Արևմտահայ գրական միտքը մի պահ հուսահատվեց, գրական կյանքն այլ կերպ ընթացավ:

1877-1878 թթ. ռուս - թուրքական պատերազմից հետո ստեղծվեց նոր իրավիճակ: Սան Ստեֆանոյի պայմանագրից և Բեռլինի արդյունքներից հուսախաբված ժողովրդին պարզ դարձան եվրոպական դիվանագիտության մոլորեցնող խաղերը, թուրքական նենգ քաղաքականության ծրագրերը: Ռաֆֆին առաջիններից էր, ով հասկացավ թուրքերի գործադրած՝ հայերի ֆիզիկական բնաջնջման քաղաքականությունը[2], նկատեց Հայկական հարցի ձախողման հոգեբանական ծանր հետևանքները և տվեց դրանց գեղարվեստական արձագանքը՝ առաջարկելով ազգափրկիչ իր գաղափարները, տալով դրանց համարձակ, թեև ռոմանտիկ, բայց իրական լուծումներ:

«Խենթը», «Ձալալեդդինը» դարձան հայկական ջարդերի ցնցող պատկերների գեղարվեստական մեկնակետը: Ռաֆֆին իր վեպերում պատկերեց մարդկային անգթության եղերական պատկերները. **«Կատարվում էր մարդկային անգթության եղեռնական տոնը:** Թշվառ զոհերի աղաղակների և հառաչանքների ձայները խառնվում էին **բոցերի որոտմունքի** հետ **... Բայց թշվառների լացը և արտասուքը չէր կարողանում ամոքել գազանների սիրտը»** [3]: Սակայն Ռաֆֆին միայն այս դաժան պատկերների նկարագրությամբ չէր սահմանափակվում. նա կատարում էր գեղարվեստական ու հոգեբանական գյուտեր՝ մահվան, ոճրի, ստրկական համակերպության պատճառը որոնելով մեր հոգեկերտվածքի մեջ: Նա Դոստոևսկու նման մեղավորին, ոճրագործին, մեր էության, գենի մեջ էր որոնում՝ **«մեզ ոչնչացնող գործիքի կոթը մեզնից է»**: Ռաֆֆին դառնացած հոգով գրում էր. «Տունը աչքի առջև այրում են, զավակները կրակի մեջ խորովում են, կինը, աղջիկը քաշում տանում են ... **Տղամարդը տեսնում է այդ բոլորը, և ինքը ամենայն խոնարհությամբ պարանոցը դեմ է անում թշնամու սրին** ... **Տո, անիծյա՜լ, դու էլ մարդ ես, դու էլ սպանիր, հետո մեռիր»**[4]: Հայերի խեղճությունը, անզորությունը իրավունք էր տալիս Ռաֆֆուն հավատացնելու, թե ժամանակը և մարդու աստվածային ազատությունը պահանջում էին չարին չարով պատասխանել, ինչը քարոզվում էր Դուդուկջյանի («Խենթը»), Ասլանի («Կայծեր») շուրթերով. «Մի ձեռք, մի զորեղ ձեռք պետք է, որ դրանց վեր բարձրացնի ընկած դրությունից և կանգնեցնի մարդկային ազատ իրավունքների վրա»[5]: Նա ինքնաարթնացումի, ընդվզումի ու պայքարի կոչ էր անում հային՝ սթափվելու և բնաջնջումից փրկվելու: Այդ նպատակով էր, որ Ռաֆֆին «Ձալալեդդին», «Խենթ», «Կայծեր» վեպերում շարունակաբար արծարծում էր հայրենասիրության, ազգային ինքնագիտակցության, ինքնաճանաչման, կրթության, զենքով անձնապաշտպանության ու հարակից շատ հարցեր՝ որպես թուրք ժողովրդի բռնությունից ազատագրվելու հիմնական «զենքեր»: Այլ կերպ ասած՝ Ռաֆֆին դառնում է զինված պայքարի անհրաժեշտության գաղափարի սկզբնավորողը, «մեղավորը», որին անմիջապես շարունակում է Ա. Արփիարյանը 1877-1878 թթ. իրադարձությունների, դրանց օրինաչափ զարգացման մեկ այլ կիզակետում՝ 1894-1896 թթ. դեպքերի ժամանակաշրջանում[6]:

---

[1] Արևմտահայ 80-ականներն իրենց առջև դնում են ազգային գիտակցությունն արթնացնելու և ինքնաճանաչման հասնելու խնդիրը: Հարկ էր հրաժարվել որոշ ավանդական ազգային գաղափարներից, արմատացած սկզբունքներից ու նախապաշարմունքներից, նայել իրականության աչքերի մեջ: Այլ էր պատկերը արևելահայ իրականության մեջ: Նրանց մոտ 80-ական թվականներն անցման տարիներ էին, սակայն այստեղ ամեն ինչ խաղաղ էր զարգանում:

[2] «Ուրեմն եվրոպական տերությունների ձայնը կտրելու համար պետք էր ցույց տալ նրանց, որ Հայաստանում հայ չկա»: Տե՛ս Ռաֆֆի, Խենթը, Խաչագողի հիշատակարանը, Ե., 1978, էջ 136:

[3] Ռաֆֆի, Խենթը, Խաչագողի հիշատակարանը, էջ 8:

[4] Ռաֆֆի, Խենթը, էջ 9:

[5] Տե՛ս Ռաֆֆի, Կայծեր, ԵԺ, հ. 5, Ե., 1985, էջ 568:

[6] Հայտնի է, որ համիդյան ջարդերից հետո Ա. Արփիարյանը մյուս գրչակից ընկերների պես ստիպված մեկնում է արտասահման: Նա Լոնդոնում Լ. Բաշալյանի հետ հիմնում է «Մարտ» և «Նոր կյանք» պարբերականները՝ ամեն ինչ նպատակաուղղելով ազգի փրկության գործին: Ա. Արփիարյանը Վենետիկում անդամակցում է «Հայ հանդես» ամսագրին, ապա՝ «Լուսաբերին», իսկ Կահիրեում խմբագրում է «Շիրակ» պարբերականը: Այս ընթացքում նրա հրապարակախոսական և գրական գործունեությունը զարգանում էին միմյանց զուգահեռ՝ հաճախ ներքին խաչաձևումներով հյուսվելով ու լրացնելով միմյանց:

1894-1896 թթ. ջարդերը, դրանց պատճառներն ու հետևանքները, ներքին կապը նախորդ իրադարձությունների (1877-1878 թթ. ռուս - թուրքական պատերազմի) և այլ փոքր թվացող, սակայն կարևոր դեպքերի հետ Արփիարյանն արծարծեց «Նոր կյանք» ամսագրում: Նա սկսում է սկզբից՝ 1890 թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած Գում-Գաբուի ցույցից՝ վերլուծելով և ցույց տալով դրա անհրաժեշտության ոչ միայն քաղաքական, այլև հոգեբանական դրդապատճառները. «Մուսայի խնդրին փակումէն ետքը զգածեալ լրջութեամբ համակեցաւ հայ ժողովուրդը. **զգաց թէ այդ դատը ազգային կեանքը յեղաշրջելու կոչուած էր. ... ազգին կը մնար կա՛մ ճակատագրին անձնատուր ըլլալ, կա՛մ կռուիլ ապրելու համար:** Նախապատութիւնը **կռուին** տրուեցաւ, ուստի եւ ինքնապաշտպանութեան գաղափարը որ շատոնց ծնունդ առած էր սկսաւ զօրանալ ու հայ աշխարհին ամէն կողմը, հայ ժողովրդին ամէն խաւերուն մէջ թափանցել: ...**Խոհականութիւնը ա՛լ խօսք չունէր: Հուլիս 15ի ցոյցը անխուսափելի հարկ կդառնար»**[1]**:** Արփիարյանը գտնում է, որ գործնական հեղափոխության թվականը այդ օրը բացվեց, որը նաև «ստրկական» հոգեբանության հեղափոխական նոր սկիզբ էր: Իրադարձությունների ընթացքն այնպես էր հանկարծակի ու անսպասելի փոխվել, որ ամեն ինչ կարող էր ծառայել հոգուտ հայերի: Հատկանշական է, որ հոդվածում Արփիարյանը է ուշադրություն է դարձնում մեկ այլ փաստի. Թուրքիան ու Եվրոպան հանկարծակիի են եկել հայի ընդվզումից. «Թիւրքիան, Եւրոպան, հայ ժողովուրդը, **ամենքն ալ յանկարծակիի եկան** Գում-Գաբուի ցոյցէն: Ասոնցմէ ոչ մէկը սակայն որոշ եւ ճշգրիտ գաղափար մը կազմած էր հայկական շարժումին կազմակերպութեանը, **իսկական ուժին, ձգտումներուն վրայ**. բայց ամենքն ալ կ'առաջնորդուէին ենթադրութիւններէ, վախերէ, յոյսերէ, որոնք աւելի **նպաստաւոր քան աննպաստ կրնային դառնալ մեր դատին»** [2]**:** Արփիարյանը որսում է թշնամու, մանավանդ սուլթանի հոգեկան տագնապն ու խուճապը. «Ձեռքերը դողալ սկսան, գունաթափվեցաւ, ու հանդէսը կարճ կապելով փութաց Ելտըզ փախչիլ: Կ. Պոլսոյ մէջ հայկական շարժում մը անսպասելի ըլլալով սուլթանը մէկէնիմէկ **շուարած ահաբեկեցաւ»**[3]**:**

1890 թ. հուլիսի 15-ի ցույցի դրդապատճառներն ուշադիր քննելուց հետո Արփիարյանն անցնում է 1894-1896 թթ. արհավիրքի պատճառների քննությանը: Նա տենդորեն, իրեն հատուկ տարերքով բացում է քաղաքական դեպքերի, եվրոպական տերությունների բարոյական պահվածքի, թուրքերի նենգ քաղաքականության պղտոր երակները: Արփիարյանը համոզված էր, որ հայկական ջարդերը հնարավոր էր կանխել, թույլ չտալ դրանց իրագործումը: Սակայն սուլթանի ցինիկ գործողությունները ոչ թե դատապարտվում, այլ լռելյայն ընդունվում էին եվրոպական «ժողովրդավար» կառավարությունների կողմից: Այլ կերպ ասած՝ եվրոպական տերություններն էլ իրենց մեղքի բաժինն ունեին հայերի կոտորածների մեջ: Փոխվել էր ոչ միայն նրանց քաղաքականությունը, այլև քաղաքական հոգեբանությունը[4]: Հետագայում Արփիարյանը հայկական ջարդերի հարցերը կրկին քննում է «Լուսաբեր», «Շիրակ» [5] և այլ պարբերականներում: Սակայն սրանցում նկատելի են դառնում գաղափարի, համոզմունքի որոշ փոփոխություններ. եթե «Նոր կյանք»-ում հրապարակախոսԱրփիարյանն ավելի համարձակ էր, ավելի ընդվզող ու առաջադիմական, ապա «Լուսաբեր»-ում և «Շիրակ»-ում՝ զգուշավոր՝ ««սկիզբն իմաստութեան, երկիւղ ... սուլթան Համիտի»ն է»[6]: Նա այստեղ ավելի զգոն է. պետք է զգույշ լինել թուրքական նենգությունից, քանի որ չի բացառվում նոր կոտորածների հավանականությունը[7]:

Ահա այսպես, Ա. Արփիարյանի գրական ու քննադատական, հասարակական ու քաղաքական հայացքները, Սան Ստեֆանոյի պայմանագրի և Բեռլինի վեհաժողովի հետևանքով ծայր առած հասարակական - քաղաքական տեղաշարժերը, թրքահայ կյանքը, 1890 թ. Կ. Պոլսում տեղի ունեցած քաղաքական ցույցը, ազատագրական պայքարի դրվագները, 1894-1896 թթ. աղետալի դեպքերն արտացոլվեցին Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուց»

---

[1] Տե՛ս «Նոր կեանք», Լոնտոն, 1898, թիւ 5, մարտ 1, էջ 71-74:

[2] «Նոր կեանք», Լոնտոն, 1898, թիւ 7, ապրիլ 1, էջ 99:

[3] Նույն տեղում, էջ 99:

[4] Այս մասին մանրամասն տե՛ս «Նոր կեանք», Լոնտոն, 1898, թիւ 5, մարտ 1, էջ 79:

[5] Այս ամսագրի համարներից մեկում Ա. Արփիարյանը հայկական ջարդերի պատճառները որոնում է ռուս-թուրքական պատերազմից էլ դեռ շատ առաջ տեղի ունեցած իրադարձություններում. **«Սասունի 1894-1904ը շարունակութիւնը չէ՞ 1826-1837-ի Ալաճա-Տաղին. Սուլթան Համիտը շարունակութիւնը չէ՞ Սուլթան Մահմուտին»:** Տե՛ս «Շիրակ», Աղեքսանդրիա, 1905, թիւ 5, մայիս, էջ 372:

[6] «Շիրակ», Աղեքսանդրիա, 1905, թիւ 7, յուլիս, էջ 137:

[7] Ա. Արփիարյանը այս մասին ավելի հանգամանալից քննում է «Լուսաբեր» թերթի (Կահիրե, 1905) համարներում: Ուշագրավ են պարբերականի՝ հատկապես «Ձարդի հաւանականութիւն» (№136) և «Հինէն նորը» (№137) հոդվածները:

վիպակում: Եվ, բնականաբար, տաղանդավոր գրողը ինքնատիպ ոճով գեղարվեստորեն արձագանքեց իր ժամանակաշրջանի դեպքերին ու իրադարձություններին՝ առաջ քաշելով ժողովրդի բարոյականության պահպանման, նրա գիտակցության «արմատական հեղաշրջման», ազգային միասնության, սեփական ուժի վրա հույսը դնելու, ինքնօգնության, ինքնափրկության, ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունները: Հր. Թամրազյանը նկատել է, որ Արփիարյանը «կարողացավ հասնել գեղարվեստի ու գաղափարի միասնության՝ չարիքների դեմ բորբոքելով հեղափոխական զգացումներ: Այս սոցիալական ոգին ու շունչը գեղարվեստի լեզվով արտահայտվեցին «Ոսկի ապարանջան» և «Մինչև ե՞րբ» պատմվածքներում, **իսկ ազգային - քաղաքական պայքարի տրամադրությունները՝ հոգեբանական խոր հիմնավորում ստացած «Կարմիր ժամուց» վիպակում**: Քննադատը և արվեստագետը, ի վերջո, որոշ երկերի մեջ հասան ներդաշնակության»[1]:

Արևմտահայ վիպագիրները չէին կարող տիրող ծանր ու բռնակալ ժամանակաշրջանի մասին ազատ գրել. համիդյան ռեժիմը, ոչնչացնող գրաքննությունը գործում էր այնպիսի վայրենի խստությամբ, որ հնարավոր չէր որևէ գործնական քայլի դիմել: Համիդյան դաժան բռնապետության մասին կարող էին գրել միայն համարձակ գրողները: Արփ. Արփիարյանի «Կարմիր ժամուցը» մի բացառիկ երևույթ էր այս առումով: Դիպուկ է Ս. Հակոբյանը. «90 ականի վերջերում եւ 900 ականի սկիզբներում կովկասահայ քաղաքական եւ սոցիալական արձակը արտայայտուած էր մեծ մասամբ Աւետիս Ահարոնեանի երկերի մեջ, որ Ռաֆֆիի երկերի արձագանքն էին եւ որ ընդհանրապէս երեւակայական գործեր էին: Արփիարեան այդ ժամանակ ներկայացրեց մեր քաղաքական *իրականութիւնը*՝ կենդանի մարդկանց միջոցով»[2] (շեղագրումը Ս. Հակոբյանինն է - **Ն. Ս.**): Ս. Հակոբյանը իրավացիորեն գտնում է, որ «Կարմիր ժամուցը» այդ շրջանի լավագույն հոգեբանական ու գեղարվեստական երկն է, և որ այն քաղաքական «պրոպագանդա» չէ[3]: Այստեղ արտացոլվել են և՛ գրողի նոր տեսակետները վիպական ավանդույթների հանդեպ[4], և՛ ժամանակաշրջանի առաջնային խնդիրների նոր անդրադարձը:

Գրականագետ Ա. Բեքմեզյանը նկատում է, որ վիպակի զարգացման պատմության մեջ, մասնավորապես 1870-1880-ական թվականներին, Արփիարյանի երկերը թեմատիկ և կառուցվածքային առանձնահատկություններով որոշակի առաջընթաց էին, որոնցում տեսնում ենք հոգեբանական վերլուծություններ՝ ի տարբերություն զուտ սոցիալական քննադատության[5]: Իսկ «Կարմիր ժամուց»-ը, ըստ նրա, 20-րդ դարի ծնունդ է և «տարբերվում է նախորդներից **թե՛ թեմատիկայով, թե՛ կերպարների կերտման արվեստով... և թե՛ գեղարվեստական հասունութեամբ»[6]:** Համաձայն մեկ այլ գրականագետի՝ Լ. Մուրադյանի, Արփիարյանին հաջողվել է տալ ժամանակաշրջանի հոգեբանական ու գեղարվեստական պատկերը, ստեղծել **նոր** տիպեր. «Արփիարյանը վիպակի սեղմ տարածքում կենտրոնացրել է ժամանակի հարազատ պատկերը՝ անդրադառնալով դեպքերին ժողովրդական, **ազգային հոգեբանության հայեցակետից**»[7]:

«Կարմիր ժամուց»-ը Ա. Արփիարյանի՝ ծավալով ամենաընդարձակ վիպակն է: Այն ամբողջությամբ լույս է տեսել 1903 թ. Ս. Պետերբուրգի «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսում, սակայն մտահղացումը ծագել էր ավելի վաղ: Ինչպես դիպուկ նկատում է Ստ. Շահպազը՝ «Ամէնէն աւելի ու ամէնէն շատ՝ **Արփիարեան կա՛յ իր այս վէպին մէջ»[8]:** Իսկ Հ. Օշականը Արփիարյանի այս վեպում իբրև առավելություն՝ նշում է նրա միայն գաղափարական կողմը. «Կը վկայեմ թէ ***Կարմիր ժամուցը*** որևէ պատմական հատորէ մը աւելի ուժգին և հարազատ պատմած է **այդ օրերու մեր գաղափարներուն ընդհանուր տարողութիւնը**:

---

[1] Տե՛ս Թամրազյան Հր., Երկեր, հ. Ա, Երևան, 2006, էջ 1136:

[2] Յակոբեան Ս., Արփիար Արփիարեան. կեանքն ու գրական գործունէութիւնը, Վիեննա, 1922, էջ 4:

[3] Նույն տեղում, էջ 4:

[4] «Կեանքի նկարներ» հոդվածում Ա. Արփիարյանը գրում է. «Վէպը, վիպակը, այն նոր ուղղութեամբ որուն կը հետեւինք, լրատար մըն է, որ ստոյգ, ճիշդ տեղեկութիւններ կը հաղորդէ քաղքի մը, գիւղի մը կեանքին, վարք ու բարքին, առողջութեանը, գաղափարներուն, հոգեկան վիճակին, զգացումներուն վրայ... վէպը, երբ իրապաշտական է, երբ կեանքի ճշգրիտ պատկերն է, կարող միջնորդ մըն է սրտերու, մտքերու հաղորդակցութեան: **Կռունկն է, որ տար աշխարհէ տար աշխարհ խապրիկ մը կը տանի»:** (Տե՛ս «Հայրենիք», Կ. Պոլիս, 1894, թիւ 998, նոյեմբեր 17):

[5] Բեքմեզյան Ա., Վիպակի ժանրը հայ նոր գրականության մեջ, Երևան, 1984, էջ 57:

[6] Նույն տեղում, էջ 56:

[7] Տե՛ս Մուրադյան Լ., նշվ. աշխ., էջ 281:

[8] Շահպազ Ստ., նշվ. աշխ., էջ 562:

Բայց այդքան»[1]: Ուշարժան է, որ ուսումնասիրողների մեջ միայն Հ. Օշականն է անդրադարձել մի շատ կարևոր խնդրի՝ արհավիրքի ոչ լրիվ պատկերմանը վիպակում: Նա գտնում է, որ վիպակը «զվարթախոհ» է, հազիվ է հանդուրժելի արյան այդ հանդեսի առջև: Հ. Օշականը Արփիարյանից ուղղակիորեն պահանջում է այդ օրերի ցեղային տառապանքների պատկերումը: Սակայն Արփիարյանը, ըստ նրա, կորցնում է «հաջող գրականություն» անելու առիթը՝ «իր ժողովուրդին ընելու իր գերագոյն ծառայութիւնը, միանգամ ընդմիշտ պատմութեան յանձնելու **ցեղի մը վճռական քանդակը**: Կը խորհիմ թէ **հեգնողը** վնասած է հոս իրեն, ողբերգականը այդքան աղօտելով իր մէջ … ու թելադրելով իրեն աղուաշ բաներ ու պատկերներ»[2]: Թեև Հ. Օշականը որոշ հարցերում ցուցաբերում է ծայրահեղ ու ոչ օբյեկտիվ մոտեցումներ, այդուամենայնիվ, ճշմարիտ դիտարկումներ առկա են:

1890 թ. օգոստոսի 19-ի ցույցը դառնում է վիպակի էպիկենտրոնը, որի շուրջ էլ ծավալվում է սյուժեն, ուր բացահայտվում են կերպարների հոգեկան աշխարհն ու մտածողությունը: Այն նաև հոգեբանական նոր վիճակի սկիզբ է. «Արարողության պահուն, երբ «ազատություն եղբարց մերոց գերելոցը» աղաչանքին երկինք առաքման կարգը եկավ, հայաստանցի տերտերը աչքերը բացաբորբ՝ բուրվառը ժողովրդին արձակեց երկնազդեցիկ զայրույթե մղյալ ուժգնությամբ ահեղագոռ «ա՛» մը սլացուց: Հայ հոգիները մեկենիմեկ այդ «ա՛»-ին վրա ամբարձիկ շնչասպառ հոն մնացին քարացած **մեծ պատահարներու սպասող անբարբառ անձկության մեջ**: «Ձա՛տ-ը» պայթեցավ, նրբահիծիյուն մեղեդիի մը պես թրթռաց «ո՛ւ-ն» երկնասլաց «թյունը» ու ամպորոտ «ամմենը» փոթորկեց տաճարին մեջ: **Երեկ՝ հուլիս – տասնհինգ էր»**[3]: Պատմական այս կարևոր իրադարձությունը ոչ միայն քաղաքական, այլև հոգեբանական հիմք է դառնում վիպակի զարգացման համար: Հանկարծակի պոռթկումը երկար սպասված իրողություն էր. «**հազար տարիներու ողորմաղերս պաղատանքը առ Աստվածն հայոց**»: Արփիարյանը գնում է հոգևոր ընդվզման դրդապատճառների որոնման ճանապարհով:

«Ազատություն» բառի արտաբերումը մի յուրօրինակ արարողություն էր, որ պետք է հասկանալ այլաբանական իմաստով. այն աղոթքի պես զորեղ կոչ է՝ ուղղված ոչ միայն բռնակալ թշնամուն, այլև անազատ աշխարհին ու մարդուն[4]: Միջադեպը դառնում է նաև երկու տարբեր համոզմունքների, տարբեր հոգեկան աշխարհ ունեցող երկու գաղափարակիր անձերի՝ տեր Հուսիկի ու Հայրապետ էֆենդու բախման սկիզբը:

Վիպակի երկրորդ հատվածում Արփիարյանը շեշտը դնում է երկու գաղափարակիր կերպարների հոգեկերտվածքի, նրանց կյանքի, ձևավորման ու զարգացման ընթացքի վրա[5]: Նա գնում է նոր հայտնաբերումների ու դրանց վերաիմաստավորման ճանապարհով:

Մինչ 1894-1896 թթ. ջարդերը, Արփիարյանը տեսնում է հայ մարդու՝ մեծահարուստի, հոգևորականի, մտավորականի հոգեկան աշխարհի փոփոխությունները: Սա հիմք է տալիս եզրակացնելու, որ հոգեկերտվածքային, դրանից բխող գաղափարական փոփոխությունների սկիզբը կարելի է համարել 1890 թ.:

Այսպես, Տոմուզ գյուղի Գաբրիելը դեռ մանկուց հաշտ չէր թշնամու հետ. «Ամեն անգամ, որ մոտակա գեղ մը երթար, ետ չէր դառնար, առանց ճամփան թուրքի և քուրդի լակոտներու հետ կռվի բռնված ըլլալու: Նախահարձակը միշտ ինքը» (328): Հայրը բնազդով զգում էր, որ իր անվախ զավակը՝ «գեղին փորձանք պիտի բերե»:

Արփիարյանը ուշադրություն է դարձնում հատկապես Գաբրիելի սովորելու և կրթվելու անհագ տենչին: Նա որոնում է միտք գայթակղեցնող հոգևորը: Վարժապետ Արշամը այս իմաստով դառնում է ոչ միայն Գաբրիելի ուսուցիչը, այլև նրա միտքն ու հոգին կրթողը:

Գաբրիելի՝ տեր Հուսիկ դառնալը նույնպես հոգեբանական փոփոխության պատճառ է: Եվ զարմացած է վարժապետ Արշամը Գաբրիելի հոգեբանական այդ նոր փոփոխության վրա. «Սա կոշտ գեղացիին մեջ **նոր մարդ** մը երևան կուգար, իր մտքեն չանցած» (330):

Գաբրիելի դաստիարակության հարցում մեծ եղավ նաև Աստվածաշնչի դերը, ինչը կարևոր տեղ է զբաղեցնում վիպակի գաղափարական հարցադրումների տիրույթում. այն նաև հոգեկերտվածքի փոփոխության նոր ու լուսավոր սկիզբ էր: Սակայն այստեղ մեկ ուրիշ

---

[1] Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 5, Երուսաղէմ, 1952, էջ 51:

[2] Նույն տեղում, էջ 53:

[3] Տե՛ս Արփիարյան Ա., Երկեր, Երևան, 1987, էջ 310: Այսուհետև այս հրատարակությունից քաղվածքների էջերը կնշվեն շարադրանքում՝ փակագծերի մեջ:

[4] Կարծում ենք՝ այստեղ նմանության եզրեր կան Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծության բովանդակությանն ու գաղափարին:

[5] Ընդվզումի իմաստով Արփիարյանի վիպակն հիշեցնում է Ռաֆֆու «Ձալալեդդին» վիպակը:

կարևոր իրողություն կա, որ չի նկատվել կամ անտեսվել է քննադատների կողմից. Գաբրիելը սիրում էր Քրիստոսին, սակայն Պողոսն էր նրան իբրև անձնվեր «հեղափոխական» գրավում. «Ապագա տերտերը Քրիստոսը սկսավ ճանչնալ ու սիրել: **Բայց Պողոսն էր զենք քաշողը**: Քրիստոս… կը խանդաղատեր իր սիրտը: **Առաքյալեն հեղափոխի շունչ մը իր հոգին կը խռովեր:** Գործք Առաքելոցին էջերը … կը կարդար բարձրաձայն **ներքին անբացատրելի վրդովումե տագնապած»** (327): Աստվածաշունչը վերածնում է Գաբրիելին՝ իբրև առաքյալի: Նա իր համար բացահայտում է իրականության ներքին ու թաքուն ծալքերը, որոնք մինչ այդ անմեկնելի էին:

Թվում է՝ Հուսիկը նորովի է իմաստավորում ավետարանական «ազատագրական» գաղափարները՝ ազգային հրատապ խնդիրներ լուծելու համար. «Ակն ընդ ակա՜ն, ատամն ընդ ատաման, **ա՜ս է տեր Եհովային կամքը.** և ես ալ ժողովրդիս ասանկ կը պատվիրեմ» (331): Եվ այստեղ կրկին դիպուկ է Ս. Հակոբյանը. «Աւետարան կարդացող աշակերտը կամաց - կամաց համոզւում է, որ **Աստվածաշունչը ավելի համապատասխան է իրականութեան**: Այնտեղ քարոզւում է **"*ակն ընդ ակա՜ն*„ի** սկզբունքը, որ ընդունում է երկու *պայքարող* կողմերի գոյութիւնը եւ իրական փաստը: **Որքան էլ սա ընդդեմ լիներ աշակերտի ճանաչած եւ հասկացած Աւետարանին - այնուամենայնիւ նրա հաեացքով աւելի ճշմարիտ էր»**[1] (շեղագրումները Ս. Հակոբյանինն են **- Ն. Ս.**):

Ապրելու, հարատևելու բնական պահանջը հանգեցնում էր ազատագրական պայքարի գաղափարին, որի հաջողությանը կարող էին հզորապես ներգործել ու նպաստել կրոնական գաղափարները: Կրոնը պետք էր ծառայեցնել ազգային հրատապ խնդիրներին: Ուստի՝ Աստծո խրատները փրկության ամենամեծ ելքերն են. «Մեր ազգին համար տեր Եհովայեն հովանավորությունը պետք է: Եգիպտացիներուն ձեռքեն իր ժողովուրդը փրկողն ան եղավ: Մենք ալ **Փարավոն** ունինք մեր գլխուն վրա, մենք ալ անհավատներուն գիրկն ենք: **Եհովայի խրատներուն մտիկ ընելով պիտի ազատինք»** (330): Մյուս կողմից՝ ավետարանական ճշմարտությունները վերաիմաստավորում են ազգային պատմությունը, արթնացնում՝ գիտակցությունը: Այլ կերպ՝ վերաիմաստավորվում են և՛ ավետարանը և՛ հայրենի հողի խորհուրդը՝ իբրև հոգևոր տարածքի. **«Իր հողը հիմակ այլևս պարզ նյութ մը չէր իրեն համար. անիկա պատմություն ուներ. կյանք կը բխեր անկե»** (327): Իսկ հոգևոր տարածքը պետք էր պահպանել ազատագրական պայքարի, զենքի միջոցով: Աստված ինքը տալիս է այդ իրավունքն ու ազատությունը Հին կտակարանում: Այդ պատճառով է, որ Գաբրիելը սիրում է Հին կտակարանը, վրիժառու Աստծուն և սուր վերցնող Պողոսին:

Հանուն ազգության լինելիության՝ ազատագրական պայքար ծավալելու գաղափարին՝ նպաստում էին նաև Ռաֆֆու գրքերը, որոնք Գաբրիելի համար դառնում են փրկության նախադուռ: Պետք էր ժողովրդին կռվի պատրաստել: Զենքով ինքնապաշտպանությունը ոչ միայն մարդկային իրավունք էր, այլև աստվածային արդար պահանջ. «Գայլին բերնեն հայրենիքնիս պիտի ազատենք կրակին լուսեն անիկա ահաբեկելով» (328):

Մահվան տագնապը ստեղծել էր հոգեբանական մի ներքին դաշտ, որում տեսանելի էին դարձել վտանգավոր ու վնասաբեր իրողությունները: Իսկ դրա համար անհրաժեշտ էր կազմակերպվել ազգովի՝ հույսը միայն իրենց վրա դնելով: Այդ իսկ պատճառով Հուսիկը իր դյուրահավատ ու լավատես ուսուցչից՝ Արշամից, մեկ քայլ առաջ էր, մանավանդ այն ժամանակ, երբ Մուսա բեկի դատաստանից հետո նրան արդեն պարզ է դառնում, որ թուրքերին ու քրդերին արտոնություն է տրվում հայերին կոտորելու. «Կը տեսնե՞ս, պարոն Արշամ, ո՞ւր մնաց ան քու Պերլինիդ դաշնագիրը, ո՞ւր է 61-րդ հոդվածդ, ո՞ւր է պետություններուդ միջամտությունը» (335):

Տեր Հուսիկն ու վարժապետ Արշամը ոչ միայն տարբեր են իրենց հոգեբանությամբ, այլև իրենց քաղաքական հայացքներով. «Տէր - Հուսիկի մէջ անձնաւորուած է ժողովրդական առողջամտութիւնը, որ ուզում էր ինքնապաշտպանութեամբ եւ սեփական ոյժով բան տեսնել: Արշամի մէջ անձնաւորուած է ազգային քաղաքական - ռոմանտիզմը, որ անգիտանում էր իրականութիւնը»[2]: Գրականագետ Ս. Հակոբյանը նկատել է նաև, որ Արփ. Արփիարյանը ներկայացրել է իրականությունը ոչ այնքան քաղաքական մտահոգություններով, որքան **հոգեբանական ուղղությամբ**[3]**:** Սակայն համաձայն չենք գրականագետի այն համոզմանը, թե Արփիարյանը «դառը հեգնությամբ» և «նուրբ կերպով քննադատուած է ազգային ռոմանթիք գործունէութիւնը եւ ցոյցի միամիտ քաղաքականութիւնը»[4]: Կարծում

[1] Յակոբեան Ս., նշվ. աշխ., 1922, էջ 31:
[2] Նույն տեղում, էջ 34:
[3] Նույն տեղում, էջ 37:
[4] Նույն տեղում, էջ 37:

ենք, որ գրողը ոչ թե հեգնում էր ցույցը, այլև ինքը դրա մեծ ջատագովն էր, որի հաղթանակին անվերապահ հավատում էր, բայց միայն ուժերի ճիշտ օգտագործման դեպքում: Սա երևում է նրա հոդվածներում, ինչին վերն արդեն անդրադարձել ենք:

Տեր Հուսիկի գաղափարական ու հոգեբանական հասունացումը պատկերելուց հետո Արփիարյանը ներկայացնում է վիպակի մյուս գլխավոր կերպարին՝ Քյուրքճյան Հայրապետ էֆենդուն, ով Խասգյուղից Օրթագյուղ էր եկել երեսուն տարի առաջ: Նա ոչ մի կիրակի եկեղեցուց չէր բացակայել և բարեպաշտ հավատացյալ էր: Արփիարյանը սրանով հատուկ ուշադրություն է հրավիրում նրա վարքի վրա: Ոչ մի բացասական արարք չկա այս մարդու ապրելակերպի ու սովորությունների մեջ: Սակայն շուտով նրա հանդարտ ու զգուշավոր հոգին սկսում է ալեկոծվել անզգույշ, սակայն վաղուց հասունացած միջադեպի պատճառով. «Երեսուն տարիներու կիրակնօրյա այս հանգստավետ կենցաղավարությունը խանգարեցավ 1890 օգոստոս 19-ին» (310):

Հայրապետ էֆենդին սթափվում է այդ նոր՝ ընդվզող, անհանդուրժող «ազատությունից». «Էֆենտին այս բոլոր նորություններեն հանկարծակիի եկավ: Շվարուն մնաց, երազին մեջ ծանր վտանգի ենթարկվողի շնչարգելությամբը: Մեկենիմեկ սթափվեցավ, սակայն աթոռը թողուց և դուրս ելավ» (310): Խախտում են զգուշության տաբուն, որի հետևանքների ծանրությունն ու լրջությունը կանխազգում է էֆենդին: Մյուս կողմից՝ նրան դուր է գալիս Հուսիկի անհանդուրժողականությունը: Սակայն ժամանակները այլ «քաղաքագիտություն» են պահանջում. «հիմակ դարը ուրիշ դար է: Սուրբ հայրապետները, մեռնինք նե, անդին հոգիներուս փրկությանը կ' օգնեն. ամա աստեղ մեզի չեն ազատեր» (315): Պետք է ճիշտ գործել ստեղծված իրավիճակի մեջ, որպեսզի նվաճվի ազգի ապրելու, հարատևելու իրավունքը: Էֆենդին հետևում է դարերով մաքառող իր ժողովրդի փիլիսոփայությանը՝ «**Օրթագեղ՝ սկիզբն իմաստության, երկյուղ Հասան փաշայի**» (315): Սա մահից ազատվելու զգուշության փիլիսոփայությունն է: Այն լինելիության հոգեբանական ազդակն է:

Ճիշտ է՝ էֆենդին ներքուստ դեմ չէ տեր Հուսիկի՝ եկեղեցում հնչեցրած կոչի իրավացիությանը, սակայն դա վտանգավոր և կործանարար է համարում իր «հոտի» և այն դիվանագիտության համար, որ վարում է նա թշնամու հետ: Մի բան էր ակնհայտ. ազգի համար ստեղծվել էր նոր, ծանր դրություն: Հուսիկի ազատ արտահայտությունները կարող են ուղղվել առաջին հերթին իրենց դեմ: Այդ է պատճառը, որ նա պահանջում է քահանային «ազատություն» բառի «զատ»-ը «ուտել», հակառակ դեպքում՝ «ան մեզի կ' ուտե»:

Ուշարժան է, որ տեր Հուսիկը, լինելով զգայուն ու տաքարյուն քահանա, չի գիտակցում իր հայտարարությունների ծանր հետևանքները, իսկ էֆենդին աչալուրջ է. նա հասկանում է նոր երևույթի ազդեցությունը, նաև այն, որ նոր քահանան փորձության է տանում իր ժողովրդին: Իսկ ինքը գիտակցում է իր դերն ու նշանակությունը ժողովրդի պահպանության գործում՝ դառնալով մի յուրօրինակ փրկիչ, ինչպես Հուսիկն է. «Կը զգար թե իր ազդեցության տկարացումը Օրթագեղին աղետաբեր պիտի ըլլար: Անգլուխ մնալով իր թաղն ալ անխոհեմության պիտի մղվեր: Ինքն իր մեջը **փրկչի կոչում զգացողի** գիտակցությամբն էր, որ ուզած էր Օրթագեղը փորձանքի դեմ ապահովել» (316): Պատահական չէ, որ հենց սկզբում Արփիարյանը պատկերում է էֆենդու բարեպաշտությունը, աստվածասիրությունն ու աստվածավախությունը:

Հայրապետ էֆենդին հին հայի տիպար է: Նա ջանք ու եռանդ չի խնայում՝ հայոց ազգը սուլթանական գահին հավատարիմ և անձնվեր ցույց տալու: Նա պարզապես ատում է լրտեսներին ու անհավատներին. «Հուդա, Վասակ, Մեհրուժան՝ կ' անվաներ այն բարձրաստիճան հայերը, որոնք ազգին մեջ եղած չեղածը կը վազեն թուրք փաշաներուն ականջը հասցնելու, իբր թե իրենց հավատարմությունը ապացուցանելու համար» (344):

Հայրապետ էֆենդին հավատարիմ է նաև ազգային հին քաղաքականությանը. ««Կտրել չկրցած ձեռքդ պա՜գ ու ճակտիդ դիր» կը քարոզեր» (344): Համբերատար սպասում է այն օրվան, երբ վերջապես կազատվի նենգ թուրքերից: Նա շատ լավ է հասկանում ստեղծված իրավիճակը, ճանաչում թուրքի միտքն ու հոգին: Էֆենդին խորապես տառապում է հայոց ամեն մի ձախողման համար. «Սան - Ստեֆանո ու Պերլին եղած դիմումներուն համար շա՜տ նեղացած էր»: «Կամուրջը չանցած սատանային աչքը կբանանք կոր», - մորմոքում էր նա:

Ազգը պետք է կառավարել՝ չմոռանալով ներկայի տիրոջը, որը թուրքն է՝ «ատիկա մի՜ մոռնաք, և ըստ այնմ ազգը կառավարեցեք» (345): Հայրապետ էֆենդին ուներ մի խնդիր. թուրքին սիրելու պարտականությունը, և այդ կեղծ սերը հոգին էր տանջում, դառնում ատելություն. **«Ներսիդիեն բան մը կ' ըմբոստանար ամենօրյա ստրկացման դեմ:** Ամեն օր,

ամեն ժամ **արթուն հոգեբան մը պիտի ըլլար,** որպեսզի որևէ թուրք չվիրավորե, մեկուն նախանձը չշարժե» (348):

Գում - Գաբուի ցույցը էֆենդու հոգեբանական բախումների սկիզբն էր: Հույսն ու երկյուղը անընդհատ իրար են հաջորդում: Այս հոգեվիճակային անցումները առաջացնում են ցնծության ու տագնապի զգացումներ. «Դանակը ա՜լ ոսկորին հասած կ' երեւնար»: Ցույցը նրա համար ցեղային դարավոր վրիժառության սկզբնավորությունն է:

Ի վերջո, 1894 թ. դեպքերը ծանր են ազդում էֆենդու վրա, դառնում նրա հոգեվիճակի փոփոխման պատճառ. «Տրապիզոնի կոտորածին լուրը առած օրը, երկու ձեռքը գլխուն զարկավ: **Զարդերուն գուժերը, իրարու ետև արագավազ իր բոլոր վախերը կիրականացնեին:** Ու փրկության աղոտ նշույլ մը չէր ընդշմարեր» (354): Աղետի ուրվականը շուտով նրան էլ է հետապնդում: Էֆենդուն կասկածում են Օրթագյուղում հեղափոխական գաղտնի կենտրոն հաստատելու մեջ: Էֆենդին գիտակցում է, որ ինքը դավադրության զոհ է. «Հայ մեծամեծները խորտակելու թրքական քաղաքականության մը կասկածը շատոնց ուներ: **Ինքն ալ զոհ պիտի երթար**: Երկարատև բանտարկության մը երկյուղը սկսավ հոգին տիրել» (357): Նա դառնում է Մյուշյուրինի խաղերի զոհը և ցավ է ապրում բանտի ճանապարհը բռնող երիտասարդների համար՝ «ի՞նչ երազներու անխոհեմ զոհեր կ' ըլլան»: Էֆենդին հասկանում է, որ ինքը, արդար թե մեղավոր, կործանված է: Բանտարկությունը նրան հասցնում է հուսահատության: Նա զղջում է և իրեն մեղավոր զգում, ինչը շատ չափով պայմանավորված է իր կրոնական գիտակցությամբ.

Արփիարյանին հաջողվում է ներկայացնել էֆենդու հոգեկան աշխարհի տառապանքները, որոնք, ի վերջո, դարձի ճանապարհը կանխորոշեցին. «Դատաստանին առջև վսեմափայլ էֆենտին իրավցնե վսեմ հանդիսացավ, կ' ըմբռներ, **թե իր անձին մեջ իր ցեղն էր, որ քրիստոնյա և իսլամ աշխարհներուն դեմը կ' դատվեր»** (360): Գաբրիելն ու Հայրապետ էֆենդին նույնանում են էության մեջ, սակայն տարբեր են նրանց դարձի ճանապարհները: Հալածված էին բոլորը՝ առանց բացառությունների. աղետը համազգային էր. «Զարնված էր աղքատ հայը, զարնված էր մտավորական հայը, պիտի զարնվեր և հարուստ հայը» (360): Զգուշավոր խոհեմություն մահվան գնացող հայից պահանջելը դժվար էր, գրեթե անհնարին, ուստի էֆենդին գալիս է այն եզրահանգման, որ պետք է ինքնապաշտպանության դիմել, իսկ ժողովուրդն ինքը միայն գիտե խոհեմության փիլիսոփայությունը. «Ժողովուրդը ինքն իր գլխուն, մենե ավելի աղեկ գիտեր, թե խոհեմությունը ինչ ընել կը պահանջե»: Տեր Հուսիկի մեջ նա տեսնում էր նվիրյալին, առաքյալին:

Եվ այսպես, դեպքերը լուրջ հետևանքներ են ունենում էֆենդու հոգում, փոխվում է նրա մտածողությունն ու հոգեբանությունը: Նա ծանր հոգեվիճակի մեջ է, ինչն արագ նկատում է տեր Հուսիկը և փորձում դուրս բերել նրան այդ վիճակից, քանի որ էֆենդու ուժը պետք է օգտակար լիներ ապագայի համար. «Այս **ոյժի փիլիսոփայութիւնը** *"Կարմիր ժամուց„*ի հիմնական գաղափարն է»[1]: Ի վերջո, ոչ ոք չէր կարող ապագան ճիշտ կանխորոշել: Այնպես անորոշ էին ժամանակները, որ մի տեղի համար օգտակար գործը կարող էր մյուսին վնասակար լինել, պետք էր գտնել տեղին բնորոշը. «Իրավ է, որ մեր գեղը ո՜րևէ աղետ չպատահեցավ, շնորհիվ ժողովրդին զենքերուն, բայց լսեցինք, որ հոս Օրթագեղ ալ բան մը չէ պատահած» (369):

Հայրապետ էֆենդու «զենքը» նրա զգուշությունն էր ու համբերությունը: Հուսիկինը՝ - ըմբոստությունը: Նրանք երկուսն էլ ճշմարիտ էին իրենց հայացքների մեջ: Ամեն տեղ պետք էր միջավայրի հնարավորությունների ու կարողությունների, նրան բնորոշ հոգեբանության համեմատ գործել. «Ամեն միջավայրի հայերը իրենք իրենց կացությանը համեմատ հոգալու են ինքզինքնին» (369): Անցյալը անցած է, պետք է նայել առաջ՝ ապագային: Ով սուր չի առնում, սրով է ընկնում: Սա է կյանքի և ավետարանի հավերժական ճշմարտությունը: Խոհեմությունը զենքի մեջ է՝ համոզված է էֆենդին: Իսկ նրա նվիրաբերած «կարմիր» ժամուցը ոչ միայն նյութական օգնություն էր ազատագրական պայքարի համար[2], այլև սեփական տառապանքի ապաշխարանքը:

Լ. Շանթը, բարձր գնահատելով վիպակի արժանիքները, գրում է. ««Կարմիր ժամուցը» ո՜չ միայն հայ իրականության պատկերացումն է պատմական որոշ շրջանի մը, այլ, եթե կուզեք, ամեն մեկ անհատ հայ հոգիի պատկերացումն է միևնույն ժամանակ: **Ամեն մեկ հայու հոգիին մեջ միշտ պահպանողական, քաղաքագետ և «զգուշ» ամիրա մը կա նստած. ինչպես**

[1] Յակոբեան Ս., նշվ., աշխ., էջ 31:

[2] «Գաղափարի մը համար արիւն տալ մեզի ցեղային ունակություն եղած է: Մեր զօրութիւնը այդ ունակութեան մէջ է, վասն զի հինցած ունակութիւնը բնաւորութեան մաս կը կազմէ», - գրում է Ա. Արփիարյանը: Տե՜ս «Նոր կեանք», Լոնտոն, 1900, թիւ 17, սեպտեմբեր 1, էջ 266:

և ամեն բան փոխելու, նորելու, ազատվելու խորին պահանջով «անխոհեմ» հեղափոխական գավառացի մը կա նստած:

«Կարմիր ժամուցի» մեջ ներկայացված խաղը շարունակ կխաղացվի ամեն հայ մարդու հոգիին մեջ իրեն տիրապետող պետություններու ճնշող թաթին տակ»[1]:

Այսպիսով, Ա. Արփիարյանը, քննելով իրականության երկու կարևոր գաղափարները, շեշտը դնում է ոչ միայն դեպքերից հետո ստեղծված հոգեբանական վիճակների, այլև գաղափարական փոփոխությունների վրա, որոնք անցան զարգացման երկար ճանապարհ: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ մինչև 1894-1896 թթ. առաջին ցեղասպանությունը հայ, մասնավորապես արևմտահայ գրականության մեջ հասարակական - քաղաքական դեպքերի ազդեցությամբ հոգեկերտվածքային փոփոխություններ կրած գրական հերոսի նոր տեսակի խնդիրը քննված չէր: Այդ հերոսի երկու՝ իրար լրացնող ու իրարամերժ տեսակների ստեղծման առաջին ու հաջողված փորձը՝ հանձինս տեր Հուսիկի և Հայրապետ էֆենդու, կատարեց Ա. Արփիարյանը «Կարմիր ժամուց» վիպակում:

Нара Саргсян, ОТРАЖЕНИЕ ПСИХОЛОГИЧЕСКОГО ВОЗДЕЙСТВИЯ ХАМИДИЙСКОЙ РЕЗНИ В ПРОИЗВЕДЕНИИ АРПИАР АРПИАРЯНА “БАГРОВОЕ ПРИНОШЕНИЕ”. Статья посвящена литературному отражению психологических последствий хамидийской резни 1894-1896 гг. и его политическим мотивам в произведении А. Арпиаряна «Багровое Приношение». В исследовании отмечено, что необходимо особое внимание уделять на новый тип литературного персонажа, перенесшего психическую и психологическую травму в последствии первого геноцида армян 1894-1896 гг. А. Арпиарян в произведении «Багровое Приношение» создал таких персонажей, которые представляли собой двух взаимодополняющих и одновременно противоположных характеров в лице - *Тер Хусика и Айрапет Эфенди*.

Ключевые слова: политические события, европейская и турецкая коварная дипломатия, геноцид 1894-1896 гг., психологические переходы, актуальные национальные проблемы, национальная идеология, самооборона, независимость, восстание, путь переобразования.

Nara Sargsyan, THE REFLECTION OF PSYCHOLOGICAL INFLUENCE OF HAMIDIAN MASSACARES IN ARPIAR ARPIARYAN'S NOVELETTE "THE CRIMSON OFFERING". The article focuses on the psychological influence of the Hamidian massacres occurred in 1894-1896 and its political motives in A. Arpiaryan's novel "The Crimson Offering". It was noticed that in 1894-1896 due to the first genocide, the problem of a new type of literary character, who underwent mental and psychological trauma has not been examined. Hence, in the novel “The Crimson Offering” A. Arpiaryan created such personages, which were reflected as two complementary, but antithetical characters in the face of *Ter Husik* and *Hayrapet Efendi*.

Key words: Political events, European and Turkish insidious diplomacy, Genocide in 1894-1896, psychological transitions, urgent national problems, national ideology, self-defense, independence, rebellion, way of conversion.

[1] Շանթ Լ., ԵԺ, հ. 7, Երևան, 2013, էջ 472:

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 2

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Մերի Հովհաննիսյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 300